ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գեղագիտության ուսուցումը գրականության միջոցով

Կատարող՝ Աննա Սարուխանյան

Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց,

հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Զիլֆիմյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն……..……...…3

Գեղագիտությունը որպես գիտություն…….……3

Գեղագիտական դաստիարակությունը գրականության ժամերին…….…...7

Եզրակացություն…….14

Գրականության ցանկ…….……...15

Ներածություն

Կարդալով, ընկալելով, վերլուծելով ու մեկնաբանելով գրական երկը՝ աշակերտները մի յուրատեսակ երկխոսության մեջ են մտնում տվյալ երկի, գրողի ու կերպարների հետ: Նրանց մոտ ձևավորվում է վերլուծական, քննադատական, ստեղծագործական միտք, երևակայություն, համադրելու և հակադրելու կարողություններ և հմտություններ:

«Գրականություն»-ը դպրոցական առարկաների շարքում իր ուրույն և առանձնահատուկ տեղն ու դերն ունի: Գրականության դասաժամերին է, որ ձևավորվում է աշակերտների գեղագիտական ճաշակը, սեփական մտքերն ու տեսակետները արտահայտելու կարողությունները, կյանքը խորապես ճանաչելու, գրական հերոսների միջոցով դաստիարակվելու, նրանց սխալները և արատները մերժելու կարողությունները: Գրականությունը օգնում է աշակերտին ունենալ սեփական կարծիք և տեսակետ, արժևորել և գնահատել կարդացածը: Գրականության դասաժամերին կարևոր տեղ պիտի զբաղեցնեն երկխոսությունները: Հատկապես միջին դասարաններում, ուր գրականության դասընթացն ավելի շատ ընթերցանություն է ենթադրում և առանձնապես կարևորվում է աշակերտների ընթերցողական կարողությունների զարգացումը:

Գրականության դասը աշակերտին ինքնարտահայտման մեծ հնարավորություններ պիտի ընձեռի: Թեմայի արդիականությունը պայմանավորված է գրականության դասերի ընթացքում գեղագիտական արժեքների ձևավորման անհրաժեշտությամբ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել գեղագիտության ուսուցումը գրականության միջոցով:

Աշխատանքի խնդիրներն են ներկայացնել գեղագիտությունը որպես գիտություն, գեղագիտական դաստիարակության ձևավորման առանձնահատկությունները գրականության դասերի ժամանակ:

Գեղագիտությունը որպես գիտություն

20-րդ դարի վերջին տեղի ունեցած սոցիալ-մշակութային, քաղաքական և տնտեսական փոփոխությունները զգալիորեն ազդեցին հասարակության արժեքային

կողմնորոշումների, մատաղ սերնդի դաստիարակության գործընթացի վրա: Ընդհանուր մշակութային ճգնաժամի կարգավորման ուղիներ որոնելու արդյունքում լուծվեց ժողովրդի գեղագիտական իդեալների հիման վրա քաղաքացիների կրթության խնդիրը: Մանկավարժական հետազոտությունների ծրագրերը և կարգավորող փաստաթղթերի վերլուծությունը հիմք է տալիս դիտարկելու գեղարվեստական կրթությունը՝ որպես գեղագիտական դաստիարակության համակարգի կարևոր բաղադրիչ:[1]

Գեղագիտությունը փիլիսոփայական գիտություն է. ուսումնասիրում է արվեստի զարգացման օրինաչափությունները:

Գեղագիտությունն աշխարհի գեղագիտական գնահատման արժեքային համակարգ է, մարդու բազմաբնույթ գործունեության դրսևորման յուրահատուկ ոլորտ: «Գեղագիտություն» տերմինն առաջինը գործածել է գերմանացի գեղագետ Ալեքսանդր Բաումգարտենը 1752 թ-ին:

Գեղագիտությունը (հունարեն՝ էսթետիկա՝ զգայական ընկալում), որպես գիտության ինքնուրույն ճյուղ, առանձնացել է XVIII դարում՝ մեկնաբանվելով կա՛մ որպես «գեղեցիկի փիլիսոփայություն», կա՛մ որպես «արվեստի փիլիսոփայություն»:

Չնայած «էսթետիկա» հասկացությունը կիրառությա մեջ է դրվել միայն 18-րդ դարի կեսերին, սակայն մարդկանց գեղարվեստական պրակտիկայի ու գեղեցիկի, գեղարվեստական գործունեության ու գեղագիտական զգացմունքի նկատմամբ նրանց հայացքների ընդհանրացման փորձերը դասերի պատմություն ունեն:[2]

Մի ժամանակ Ֆ.Մ.Դոստոևսկին հռչակեց. «Գեղեցկությունը կփրկի աշխարհը»: Սակայն ինչու այն մինչև հիմա չի փրկել նրան: Միթե արվեստի քիչ գլուխգործոցներ կան մարդկության պատմության մեջ: Սվիթը «Գուլիվերի ճանապարհորդության» հրատարակությունից հետո սպասում էր աշխարհի ուղղմանը, չարիքից, անարդարությունից նրա փրկությանը: «Ռևիզորը» չոչնչացրեց ո՛չ կաշառակերներին, ո՛չ բյուրոկրատներին: Շեքսպիրը չփրկեց աշխարհը յագոներից, Պուշկինը՝ սալիերիներից, Մոլիերը՝ մարդատյացներից ու սուր ճգնավորներից: Գ. Ուսպենսկին

[1]Любимова,Ю.С., Эстетическое воспитание и художественное образование младших школьников, Ю.С.Любимова, Пачатковаяшкола. 2007. No1., С.39.

[2]Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, Մանկավարժություն, ամսագիր, 2.2017, էջ 29:

պատմում էր, թե ինչպես Միլոսյան Վեներան ուղղել է կյանքի կողմից ճնշված, կքված մարդկանցից մեկին: Բայց որքան մարդիկ մնացին կքված, կոտրված նույն այն աշխարհում, որտեղ կա և՛ Միլոսյան Վեներա, և՛ Ռաֆայելի «Սիքստինյան տիրամայրը»:

Հասարակության մեջ շատ ուժեր են գործում, և գեղեցկությունը, արվեստը սոսկ մեկն է դրանցից: Գեղեցկությունն ընդունակ է «փրկելու աշխարհը», բայց այն դեպքում, երբ մյուս ուժերի հասարակականորեն խորտակիչ գործողություններն արմատից չեն ոչնչացնում այն ամենը, ինչ ստեղծում է արվեստը:[3]

Գեղագիտությունը ուսմունք է համամարդկային արժեքների պատմականորեն պայմանավորված էության, դրանց ստեղծման, ընկալման, յուրացման և գնահատման վերաբերյալ: Այն արտահայտում է գեղագիտական հայացքների մի կուռ համակարգ, որն իր դրոշմն է դնում մարդկանց նյութական և հոգևոր գործունեության նկարագրի վրա: Գեղագիտությունը քննարկում է աշխարհի հետ մարդու հարաբերության սկզբունքները և արվեստի օրինաչափությունները: Այն գեղագիտական դաստիարակության տեսությունն է, որի գերագույն նպատակը հումանիզմն է:[4]

Մեր ժամանակներում գեղագիտական դրսևորումներն առկա են ոչ միայն արվեստում, այլև բնության մեջ, հասարակական կյանքում, նյութական արտադրության, գեղարվեստական նախագծման (դիզայն) մեջ և այլուր:

Գեղագիտական գնահատականի արժանանում է գրեթե յուրաքանչյուր առարկա կամ երևույթ, որն անմիջականորեն հենվում է տվյալ իրողության բովանդակությունն արտահայտող որոշակի զգայական ձևի հատկանիշների վրա: Իրականության առարկայական հատկություններն ու օրինաչափությունները գեղագիտական հարաբերության առարկայական կողմն են, իսկ գեղագիտական գիտակցության դրսևորումները՝ գեղագիտական զգացման անհատական կողմը:

Գեղեցիկով և գեղեցիկի միջոցով դաստիարակությունը ձևավորում են ոչ միայն անձի գեղագիտաարժեքային կողմնորոշումը, այլև զարգացնում ստեղծագործելու, աշխատանքային գործունեության մեջ, կենցաղում, արարքներում և վարքի մեջ, ինչպես նաև արվեստում գեղագիտական արժեքներ ստեղծելու ընդունակությունը:

---

[3] Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1982, էջ 492:

[4] Քոչարյան Լ., Գեղագիտական դաստիարակության խնդիրները, Ընտանիք և դպրոց, գիտամեթոդական ամսագիր, 1.2010, էջ 11-17;

Գեղեցիկը կյանքում գեղագիտական դաստիարակության և՛ միջոցն է, և՛ արդյունքը: Այն խտացած է արվեստում, գեղարվեստական գրականության մեջ, անխզելիորեն կապված է բնությանը, հասարակական և աշխատանքային գործունեությանը, մարդկանց կենցաղին, նրանց փոխհարաբերություններում գեղագիտական դաստիարակության համակարգն ամբողջությամբ օգտագործում է իրականության գեղագիտական բոլոր երևույթները:[5]

Գեղագիտական հայացքները սաղմնավորվել են վաղնջական ժամանակներում: Այն որոշակիորեն ձևավորվել և զարգացել է Հին Հունաստանում՝ հատկապես պյութագորականների, ավելի ուշ՝ Սոկրատեսի, Պլատոնի և Արիստոտելի աշխատություններում: Հին աշխարհի գեղագիտության դասական երկերն են Արիստոտելի «Պոետիկան» և անտիկ անհայտ հեղինակի «Վեհի մասին» տրակտատը: Վերածննդի դարաշրջանի ներկայացուցիչներն իրենց գեղագիտական հայացքներում մշակել են իրականության ռեալիստական, մարդասիրական ըմբռնումները:

XVII–XVIII դարերում գեղագիտական ուշագրավ մտքեր են արտահայտել ֆրանսիացի լուսավորիչներ Էթիեն Կոնդիլյակը, Դենի Դիդրոն, Ժան-Ժակ Ռուսոն, անգլիացիներ Ջոն Հաթչինսոնը, Էդմունդ Բյորկը, Ուիլյամ Հոգարդը և ուրիշներ: XVIII–XX դարերում գեղագիտության զարգացմանը նշանակալիորեն նպաստել են գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչներ Յոհան Հերդերը, Իմանուիլ Կանտը, Ֆրիդրիխ Շելինգը, Գեորգ Հեգելը, Արթուր Շոպենհաուերը, ֆրանսիացի իդեալիստ փիլիսոփա Անրի Բերգսոնը, ռուս գեղագետ մտածողներ Վիսարիոն Բելինսկին, Վլադիմիր Սոլովյովը, Պավել Ֆլորենսկին, գրողներ Յոհան Գյոթեն, Ֆրիդրիխ Շիլլերը, Օնորե դը Բալզակը, Էմիլ Զոլան, դրամատուրգներ Գոտհոլդ Լեսինգը, Վյաչեսլավ Իվանովը, նկարիչ-աբստրակցիոնիստ Վասիլի Կանդինսկին և ուրիշներ:

Գեղագիտական միտքը Հայաստանում ձևավորվել է անտիկ շրջանում: Մինչև քրիստոնեության ընդունումը գեղագիտական ճաշակը զարգացել է հիմնականում հին հայկական, պարսկական և հելլենական մշակույթների փոխազդեցությունների դաշտում: Եզնիկ Կողբացին Աստծուն համարել է գեղեցիկի արարիչ, իսկ բարին՝

[5] Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, <<Մանկավարժություն>>, ամսագիր, 2.2017, էջ 28;

ազատ կամքի արգասիք, արվեստ արարող մարդուն համեմատել է Արարչի հետ: Դավիթ Անհաղթը ենթադրել է, որ աստվածությունը, անճանաչելի լինելով հանդերձ, մեր իմացությանը մատչելի է, երբ քննում ենք Աստծու արարչագործությունները, աշխարհի ներդաշնակ շարժումը, աներևույթը ճանաչում երևացողի միջոցով:

Գեղագիտական դաստիարակությունը գրականության ժամերին

Գեղարվեստը անփոխարինելի տեղ և դեր ունի նոր մարդու դաստիարակության գործում: Մեր կյանքի այս բարդ և հակասական ժամանակաշրջանում շատ անցանկալի երևույթներ պայմանավորված են նաև գրականությունից, արվեստից հեռանալու հետ կապված: Վիթխարի է գրականության դերը մարդու հոգևոր-բարոյական դաստիարակության գործում: Մեր ժամանակներում, երբ մեծ չափերի է հասել մարդկանց սպառողական հոգեբանությունը՝ դուրս մղելով հայ մարդու ավանդական հատկանիշները, գրականությունը չպետք է կորցնի մարդկանց հոգիներին ներազդելու հզոր ուժը: Այսօր գեղեցիկն ու վսեմը իրենց տեղը զիջել են մերկ շահին, նյութական արժեքներին: Այսօր վտանգված է հայ մարդու , մատաղ սերնդի ավանդական կերպարը: Ահա, գրականությունը կոչված է փրկելու այդ մարդուն: Գրականության վեհ կոչումն է ժամանակակից սերնդի մեջ փրկել մարդուն և նրա մեջ ներարկել մարդասիրություն, հայրենասիրություն, արժանապատվություն:

Այսօր գործ ունենք 21-րդ դարի սերնդի հետ, որի ճաշակն ու իմացությունները կրթվում են ռադիոհեռուստատեսային բազմապիսի հաղորդումներով, կապի նորագույն միջոցներով, հարուստ տեղեկատվությամբ, համակարգչային հմտություններով, համացանցից և էլեկտրոնային փոստից օգտվելու կարողությամբ: Սա նոր քաղաքակրթություն է, և մեր աշակերտները այդ քաղաքակրթության մեջ են: Նրանց հոգեբանության վրա մեծ ներգործություն է ունենում ժամանակակից կյանքը, որը սկսվում է ընտանիքից ու շարունակվում հանրային տարբեր հարաբերությունների մեջ:

Ժամանակակից սերունդը հայտնվել է և՛ ազգային, և՛ համաշխարհային մտավոր ոլորտներում, և նրա ճաշակը ձևավորվում է այս երկու ոլորտների ազդեցության ներքո: Բազմադարյան հայ գրականությունը իր իմաստությամբ և

հարստությամբ մերօրյա սերնդին պետք է սնի ազգային արժեքներով, նրան տա ճաշակ, ապրելու հմտություն, ազգային նկարագիր և հոգեկերտվածք:

Գեղագիտական դաստիարակությունը սերն ու հարգանքն է գեղեցկության նկատմամբ: Մարդը մանուկ հասակից սկսում է գնահատել իր շրջապատը և իրեն շրջապատող միջավայրն իր բոլոր "պարագաներով" դասում որոշակի սանդղակների վրա՝ այդ թվում և գեղեցկության ու տգեղի կշեռքի վրա: Համամիտ եմ , որ մարդ գեղագիտական դաստիարակություն սկսում է ստանալ դեռ մոր արգանդում: Ապագա մանուկները դեռ լույս աշխարհ չեկած շրջապատվում են գեղեցիկով ու բարով (եթե երեխան իհարկե սիրո պտուղ է ու սպասված): Ապագայում, ծնվելուց հետո երեխային փորձում են շրջապատել գեղեցիկով: Իսկ եթե այդ գեղեցիկը լոկ գեղեցիկ իրերով չի սահմանափակվում, դա սկսում է վերածվել դաստիարակության: Այսինքն գալիս է պահ, երբ երեխան սկսում է շրջապատի մեջ տեսնել ոչ թե նյութական գեղեցկությունը, այլ այդ գեղեցկության հոգին ու շունչը, այսինքն այն ամենը, ինչը կազմում է այդ գեղեցկության արժեքը: Աստիճանաբար զարգացնելով երեխայի մեջ գեղեցիկի գնահատման սանդղակը երեխային տրվում է հենց այդ գեղագիտական դաստիարակությունը:

Գեղեցիկը միշտ էլ գրավում է մարդու ուշադրությունը, շոյում նրա հայացքը, կերտում բնավորությունը, ազնվացնում հոգին: Գեղեցիկի զգացողությունը երջանկություն է, որովհետև մարդը նրանով հարաբերվում է բնության, կյանքի և արվեստի հետ: Անձի զարգացման կարևոր հատկանիշներիգ մեկն էլ գեղագիտական դաստիարակությունն է: Այն հնարավորություն է տալիս մարդուն՝ իրերը, երևույթները, մարդկային փոխհարաբերությունները չափել գեղեցիկի, վեհի տեսանկյունից: Աշխարհը գեղեցիկի դիրքերից չափող մարդը նաև ազգային, մշակութային ժառանգության կրողն է, պահպանողը, սերունդներին փոխանցողը: Շատ մատչելի է գրական կերպարների վերլուծությամբ աշակերտների մեջ սերմանել գեղագիտական ճաշակ, գեղեցիկն ընկալելու, գնահատելու կարողություն, ուղղակի այն պետք է մատուցել ճիշտ և գրագետ, այդ դեպքում նաև գեղարվեստական կերպարի ուսումնասիրությունը օգնում է ձևավորելու սովորողների հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը:

Գեղարվեստական գրականության լեզվի և ոճի ուսումնասիրության տեսակետից կարևոր արժեք ունեն բնանկարը և դիմանկարը: Դրանք ծառայում են միջավայրի և հերոսների կերպավորմանը՝ մի կողմից, և մյուս կողմից էլ դառնում են հեղինակի գեղագիտական հայացքների արտահայտիչը: Իհարկե, յուրաքանչյուր գրողի գրական նախասիրություններով և գեղագիտական հայացքներով պայմանավորված՝ դիմանկարի ու բնանկարի կիրառության հաճախականությունները կարող են տարբեր լինել:[6]

Հայ գեղագիտական մտքի արմատները ձգվում են մինչև վաղնջական այն ժամանակները, երբ երևույթների ճանաչման ընթացքում հայոց լեզուն անհրաժեշտաբար առանձնացրել է իրականության և մարդու գործունեության նկատմամբ հասարակական հուզական-գաղափարական ընկալումները նշանակող և ավեստի տեսակները մատնանշող այնպիսի հասկացություններ, ինչպես՝ գեղեցիկ, տգեղ, սքանչելի, առասպել, վեպ, ցուցք, երգ, պար, կատակ, մրմունջ, ողբ և այլն: Գեղագիտության հանգուցային խնդիրներից է գեղեցիկի՝ որպես իրականության բարձրագույն կատարելությունն ընդհյանացնող գիտական հասկացության բացատրությունը: Այս հանգամանքն ինքնին արժեքավորում է գեղեցիկի մասին հայ հին մտածողների թողած դատողությունները:

«Մարդն իր կորցրած ազնվությունը բնությամբ կարող է գտնել». Գեղագիտական այս դավանանքը է Սահյանի բնապաշտական պոեզիայի առանցքում: Բանաստեղծի բնության իր իդեալում է գտնում այն ներդաշնակությունը, որով ձևավորվում է նրա գեղագիտությունը: Սահյանի պոեզիան, անկախ նրա արծարծած թեմաների աշխարհագրական սահմաններից, համամարդկային արժեք ունի: Իր ստեղծագործության մեջ հաստատելով ոգու ազատության արժեքը՝ Սահյանը յուրաքանչյուր մարդու մեջ կատարելագործման և բարոյական ինքնաստեղծման հեռանկար է բացում: Նրա բնապաշտական տողերում առկայծում է բարության լույսը, աշխարհի հետ մարդկանց հարազատության ու անբաժանելիության, կեցության հուզապարար գաղտնիքի զգացումը:

Սահյանի խոսքի պատկերավորությանն աառանձնահատկություն է հաղորդում նաև բույրը, որն ավելանում է գույնին՝ պատկերը դարձնելով ավելի

[6] https://granish.org/bnankari-uu-dimanakri-arandznahatkuutyuunnery/

զգայական և կենսաթրթիռ: Բույրը Սահյանի գեղագիտական համակարգում դառնում է խորհրդանշական բանալի, որի միջոցով նա բացահայտում է մարդու և բնության անքակտելիությունը, ինչը չի վրիպում բնության հետ մանկուց հաշտ ապրող պոետի հայացքից: Որքան կատարյալ է արարչի կողմից ստեղծված բնությունն իր գույներով, բույրերով ու համով, այնքան ավելի է բարդանում մարդու ձգտումը դեպի կատարելություն, սակայն բանաստեղծի գեղագիտական իդեալը հենց այդ ձգտման մեջ պետք է որոնել:

Սահյանի բառը զգում է բնության աշխարհի և մարդու ներքին աշխարհի գեղեցկությունները ու մարդուն ճանաչել տալիս այդ գեղեցկությունները: Նրա գեղագիտական իդեալը ձգտում է դեպի այդ գեղեցիկը, բարին, ազնիվը:

Սահյանի ստեղծագործություններում գեղագիտական կոնտեքստը օրինաչափորեն պայմանավորված է տվյալ դարաշրջանի սոցիալ-պտմական պայմաններով: Դրսևորելով իր վերաբերմունքը սոցիալական այս կամ այն երևույթների նկատմամբ, որն արտահայտված է տխրության ու տառապանքի ձևով, Սահյանը բնության իր իդեալում է գտնում այն ստեղծագործական ներդաշնակությունը, որով ձևավորվում է նրա գեղագիտությունը:

Գրեթե բոլոր բանաստեղծություններում բնության կերպավորումը ներկայացված է գեղագիտական զգացմունքների ինտենսիվությամբ Բնության՝ շունչն առած պատկերները դառնում են գրողի գեղագիտական զգացմունքների իրադրական դրսևորումներ:

20-րդ դարի մշակույթի զարգացման օրինաչաձությունները երևակվել են ինչպես գեղագիտական, այնպես էլ տեսական ճանաչողության մեջ:[7]

Համո Սահյանի «Ծովն էր, գիշերն էր» բանաստեղծության ուսուցումը 7-րդ դասարանում նպատակ ունի աշակերտներին սովորեցնել. ո՞ր շարքում է զետեղված բանաստեղծությունը, ի՞նչ զգացողություն է առաջացնում, բանաստեղծության հուզական և գաղափարական իմաստը, բնության և մարդու անխզելի կապը, բնապաշտ Սահյանի՝ մարդու կերպավորումը բնության որևէ պահի մեջ:

Աշակերտները դասի ավարտին պետք է կարողանան բանաստեղծությունը շարադրել արձակ՝ հավատարիմ մնալով հեղինակի բառապաշարին, գտնել բանաստեղծության

[7] Սառաջյան Զարինե, Իմաստասիրությունը Համո Սահյանի բնապաշտական երկերում, Երևան 2015:

կենսագրական հենքը, մեկնաբանել ծովի, գիշերի և աստղերի կապը, ընդհանարցնելով հաստատել յուրաքանչյուր անհատի հոգեվիճակը, գնահատել բանաստեղծության բառապաշարը, հիմնավորել լեզվի պարզությունը:

Կարելի է կիրառել «3-րոպեանոց շարադրանք», «Կրկնակի գրառումների օրագիր», «Հաստ» և «Բարակ» հարցերի աղյուսակ, «Խորանարդում» մեթոդները:

Անհրաժեշտ ուսումնական նյութերն են՝ Դասագիրք, քարտեր, նշագրիչներ, A-4 չափսի թուղթ, Գևորգ Բաշինջաղյանի «Սևանը գիշերով», Հովհաննես Այվազովսկու «Ծովը փոթորկի պահին» նկարները:

Ուսուցիչը հանգամանորեն ստուգում է հին նյութի յուրացումը, անցկացնում ասմունքի մրցույթ, գնահատում և անցնում նոր նյութի ուսուցմանը:

Այս դասը պետք է դառնա աշակերտի զգացողության զարգացման դաս, հոգու և մտքի կապի արտահայտության դաս: «Հայաստան» նկարի հետ ցուցադրվում է Այվազովսկու և Բաշինջաղյանի նկարներն ու գրատախտակին կամ A-4 չափսի թղթերի վրա գրում բառեր, որոնք արտահայտում են սովորողների առաջին տպավորությունը:

Անցնելով նոր նյութի մատուցմանը՝ ուսուցիչն ապահովում է հին և նոր նյութերի բովանդակային կապը, բնության ու մարդու հոգեբանության բացահայտումը, հակադրում կամ համադրում քարերի սիմֆոնիան և ծովի հանդարտությունը:

Էկրանին ծոի գիշերային պատկեր է՝ Բաշինջաղյանի «Սևանը գիշերով» նկարը: Աշակերտներին առաջարկվում է գրել իրենց առաջին զգացողությունը: Լսվում է Վիվալդիի «Տարվա եղանակները», գրում իրենց զգացողության մասին: Այնուհետև ուսուցիչը կարդում է «Ծովն էր, գիշերն էր» բանաստեղծությունը: Աշակերտներին առաջարկվում է բանաստեղծությունը կապել իրենց հետ կատարված որևէ դեպքի հետ: Կարդում են կամ բանավոր են ներկայացնում իրենց շարադրանքները:

Իմաստի ընկալման փուլում՝ ընթերցումն ավարտելուց հետո խմբերից մեկը ներկայացնում է, որ բանաստեղծության մեջ չկան գեղարվեստական պատկերավորման միջոցներ, որ մակդիր, ոչ համեմատություն, ոչ փոխաբերություն կա անձնավորում: բանաստեղծությունն ամբողջությամբ արտահայտում է հոգեվիճակ, երկու մտերիմների հոգիների դաշնություն, որն օրորում է երրոդ մտերիմը՝ ծովը: Թվում է՝ լսում ես ծովի մեղմ ծփանքը, աստղերը քեզ վերև են

տանում, և դու օրորվում ես երկնայի և երկրային ծովերի միջև: բանաստեղծը համոզված է, որ չորրորդ մտերիմը՝ գիշերը իրենց պարուրել է խաղաղ տրտմությամբ, և առավոտը մոլորվել է գիշերվա գրկում: Առավոտը չգիտի, որ միմյանց մեջ իրար որոնող հոգիները զրուցում ենխաղաղ գիշերվա, աստղային երկնքի և խաղաղ ծովի հետ, և ծովանում է նրանց սերը, ինչպես խորհրդավոր գիշերը, գաղտնիքներով լի ծովն ու երկնքում առկայծող աստղերը:

Նշում են, որ բանաստեղծությունը զետեղված է «Ես այն են եղել» շարքում, ուրեմն բանաստեղծը հենց ծովն ու գիշերն է եղել և հյուսել է իր հուգու դաշնությունը՝ կախվելով երկնքի աստղերից:

Աշակերտներից մեկը կարդում է «Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ» բանաստեղծությունը: Աշակերտները եզրակացնում են, որ այստեղ նույնպես բացակայում է գեղարվեստական պատկերավորման միջոցները, և իշխում է խռոված ու ներող հոգու մեծ խռովքը:

Այնուհետև ուսուցիչն ամփոփում է Սահյան բանաստեղծին, նշում նրա մարդկային ցանկությունը՝ «Ինձ բացակա չդնեք»: Նա ուզում է ներկա լինել քարափների լռության համերգում, համբերության հանդեսում, քարափների թռիչքի հանդեսում, նրանց ամրության հանդեսում, ինն էլ ձուլվում է քարափներին, դառնում քարե պատարագ և նրա միակ ցանկությունը քարափների «անվերջ, անշարժ» երթում ներկա լինելն է, ասել է թե՝ հայ ժողովրդի և հայ գրականության անկարգ երթի հավերժի ճամփորդն է մեծ բնապաշտն ու մարդապաշտը: Մենք էլ դառնանք մեծ բանաստեղծի պոեզիայի, նրա քարափների, սարերի, ձորերի ու առուների թարգմանը և խոնարհ ընթերցողը:

Կշռադատման փուլում Հանձնարարվում է գրել «Ինձ բացակա չդնեք» վերնագրով շարադրություն և ներկայացնել /3 րոպե/:

Կատարվում է քննարկում, մտքերի փոխանակում:

Հանձնարարվում է տնային աշխատանք՝ նամակ գրել Սահյանին՝ սահյանական տողերով:

Գեղագիտական դաստիարակության, գրականության օգտակարության և արդիականության սկզբունքների միջոցով ձևավորվում է աշակերտի մարդ-տեսակը, գեղագիտական ճաշակը, արժեքային համակարգը, սեփական ժողովրդի

պատմության փառավոր, ինչու՞ չէ՝ նաև արյունոտ էջերի իմացությունը:

Գրականության դասաժամերին է, որ աշակերտները սերտորեն առնչվում են թե՛ երաժշտությանը, թե՛ կերպարվեստին՝ սնվելով արվեստի բազմադարյան և բազմաշերտ գանձարանից: Գրականության դասաժամերին է, որ աշակերտները կտրվում են առօրյա կյանքի գորշությունից և մուտք գործում գրականության հրաշք աշխարհ՝ առնչվելով պոեզիայի և արձակի անմահ գոհարներին՝ այնտեղից քաղելով կյանքի ուսանելի դասեր ու խորհուրդներ: Գրականությունը սնում է աշակերտի հոգին, մոտեցնում ոգեղեն աշխարհին, որտեղ աշակերտը զգում է հայ մեծերի սրտի և հոգու տրոփյունը, ասելիքի խորությունն ու արդիականությունը:

Եզրակացություն

Այսպիսով, փոխվել են այսօրվա աշակերտի հայացքները, սկզբունքներն ու դիրքորոշումը: Առնչվում ենք նոր արժեքային համակարգ կրող աշակերտի հետ, որի պահանջմունքներն այլ են: Ահա այս իրականության մեջ ամենադժվարը գրականության ուսուցչի վիճակն է, որովհետև ոչ մի ուսումնական առարկա այնքան չի առնչվում արժեհամակարգի հետ, որքան գրականությունը:

Հիրավի, դպրոցական առարկաների շարքում իր ուրույն և առանձնահատուկ տեղն ու դերն ունի «Գրականություն»-ը: Գրականության դասաժամերին է, որ ձևավորվում է աշակերտների գեղագիտական ճաշակը, սեփական մտքերն ու տեսակետները արտահայտելու կարողությունները, կյանքը խորապես ճանաչելու, գրական հերոսների միջոցով դաստիարակվելու, նրանց սխալները և արատները մերժելու կարողությունները

Գեղարվեստական գրականությունը գեղագիտական դաստիարակության կարևորագույն աղբյուր է: Սա իրականությունը պատկերավոր ձևով արտացոլող ամենաառաջին ու նշանակալից տեսակներից մեկն է, որի հետ գործ ունի աճող մարդը: Դպրոցականների գեղագիտական զգացմունքները զարգանում են ուսուցչի ջերմ, կենդանի, անկեղծ խոսքի ազդեցության տակ, որը հմտորեն է օգտագործում առարկայի նկատմամբ հետաքրքրություն, գրականության նկատմամբ սեր

արթնացնելու հնարների հարստությունը: Ուսուցչի կատարած աշխատանքը խոսքի վրա, որպես հատուկ գեղարվեստական միջոց, իրենց՝ սովորողներին արտահայտիչ ձևով կարդալ սովորեցնելը, գրական ստեղծագործական հմտությունների ու կարողությունների ձևավորումը զարգացնում է սովորողների ճաշակն ու գեղագիտական ակտիվությունը: Դպրոցի և ընտանիքի պատասխանատվությունը սովորողների ընթերցանությունը ղեկավարելու հարցում շատ մեծ է: Արտահայտիչ ընթերցանությունը դպրոցականի գեղագիտական ու գրական ճաշակի և գեղագիտական զգայունության դաստիարակության ուժեղ միջոցներից մեկն է:

Գրականության ցանկ

1. Գասպարյան Դ., Գրականություն, 7-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2011:
2. Բորև Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982:
3. Հարությունյան Ա., Գեղարվեստական դաստիարակության հիմնախնդրի պատմական զարգացման փուլերը, <<Մանկավարժություն>>, ամսագիր, 2, 2017:
4. Սառաջյան Զ., Իմաստասիրությունը Համո Սահյանի բնապաշտական երկերում, Երևան 2015:
5. Քոչարյան Լ., Գեղագիտական դաստիարակության խնդիրները, Ընտանիք և դպրոց, գիտամեթոդական ամսագիր, h.1, 2010:
6. Любимова,Ю.С., Эстетическое воспитание и художественное образование младших школьников, Ю.С.Любимова, Пачатковаяшкола, 2007:
7. http://litinst.sci.am/am/archiv/Zarine.pdf
8. http://encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1047
9. https://forum.armedu.am/forum
10. https://granish.org/bnankari-uu-dimanakri-arandznahatkuutyuunnery/